ԻՆՉՊԵՍ ԱՂՈԹԵԼ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
HOW TO PRAY FOR HEALING

Բանալի համարներ. Հակ. 5.14-18

14 Եթէ ձեզանից մէկը հիվանդ է, թող եկեղեցու երէցներին կանչի, որ նորա վերայ աղօթք անեն,
նորան յուղով օծեն Տիրոջ անունով. 15 Եւ հաւատքով աղօթքը կ՚փրկի այն հիւանդին, եւ Տէրը վեր
կ՚կացնի նորան. Եւ եթէ մեղք գործած լինի, կ՚թողվի նորան: 16 Միմյանց խոստովանեք ձեր
հանցանքները, և միմյանց համար աղոթեք, որ բժշկվեք, շատ զօրաւոր է արդարի աղօթքը
ներգործելով: 17 Եղիան մարդ էր մեզ պէս՝ կրքի ենթակա. Եւ ջերմեռանդ աղոթեց որ անձրեւ չ՚գա, եւ
անձրեւ չ՚եկաւ երկրի վրա երեք տարի եւ վեց ամիս: 18 Եւ դարձեալ աղոթեց, եւ երկինքն անձրեւ
տվեց, եւ երկիրն իր պտուղը բուսեցրեց:

Հովհաննես 9.2-3 – 2 Նրա աշակերտները հարցրին նրան. Ռաբբի, ո՞վ է մեղանչել, որ նա կույր է
ծնվել. նա՞, թե՞ նրա ծնողները: 3 Հիսուսը պատասխանեց. Ո՛չ նա է մեղանչել, ո՛չ էլ նրա ծնողները,
այլ որպեսզի նրա միջոցով Աստծու գործերը հայտնի դառնան:

Ա Կորնթացիներին 11.30 – Դրա համար էլ ձեր մեջ բազում հիվանդներ ու ցավագարներ կան,
բավականաչափ են նաև նրանք, ովքեր ննջեցին:

3 ԴԻՏՈՒՄՆԵՐ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Նշում. Առաջինը ճշգրիտ չէ)

I. ԳԵՐԲՆԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼԵՎՍ ՏԵՂԻ ՉԻ ՈՒՆԵՆՈՒՄ:
DIVINE HEALING NO LONGER HAPPENS.

- ***Benjamin B. Warfield – Բենջամին Բրեքինրիջ Ուորֆիլդը եղել է Փրինսթոնի սեմինարիայի աստվածաբանության պրոֆեսոր 1887 - 1921 թվականներին:***
- ***Նա գրել է մի գիրք, որը կոչվում է «Կեղծ հրաշքներ»:***

  Դադարեցումը (Cessationism) վարդապետություն է այն մասին, որ հոգևոր պարգևները, ինչպիսիք են լեզուներով խոսելը, մարգարեությունը և բժշկությունը, դադարեցվել են առաքելական դարաշրջանում:

II. ԳԵՐԲՆԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՇՏ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆՈՒՄ, ԵԹԵ ԿԱ ՀԱՎԱՏ:
DIVINE HEALING ALWAYS HAPPENS IF THERE IS FAITH.

Նոր Կտակարանի բժշկությունների ճնշող մեծամասնությունը Հիսուս Քրիստոսի կողմից արված բժշկությունն է: Նրա բժշկությունները սերտորեն զուգակցվեցին ավետարանի ուղերձի քարոզչությամբ:

Ղուկ. 5.18,20 - 18 Եւ ահա մարդիկ մահիճով մի մարդ էին բերում, որ անդամալոյծ էր, եւ ուզում
էին նորան ներս տանել, եւ նորա առաջը դնել: ...20 Եւ նա նորանց հավատքը տեսնելով նորան
ասեց. Ով մարդ, քո մեղքերը թողուած լինեն քեզ:

Մատ. 8.8,10 - 8 Եւ հարիւրապետը պատասխանելով ասեց. Տէր, ես արժանի չեմ, որ իմ հարկի տակ մտնես, այլ միայն մի խօսք ասա՝ եւ իմ ծառան կբժշկվի:

10 Եւ երբոր Հիսուսը լսեց, զարմացավ եւ ասեց ետեւից եկողներին. Ճշմարիտ ասում եմ ձեզ. Իսրայէլի մէջ էլ այսպիսի հավատք չգտա:

Մար. 5.25,34 - 25 "Մի կին կար, որ տասներկու տարի արյունահոսություն ուներ: ... 34 Նա էլ ասեց նորան. Դուստր, քո հավատքն ազատեց քեզ, գնա խաղաղութեամբ, եւ քո տանջանքից առողջ եղիր:

Մատ. 9.28 - 28 Եւ երբոր տունը մտավ, կոյրերը նորա մօտ եկան. եւ Հիսուսը նորանց ասեց. Հավատո՞ւմ էք թէ կարող եմ այդ անել, նորան ասեցին. Այո, Տէր:

Մատ. 13.58 - 58 Եվ Հիսուսը նրանց անհավատության պատճառով այնտեղ շատ հրաշքներ չգործեց:

Մատ. 15.28 - 28 Այն ժամանակ Հիսուսը պատասխանեց նրան ու ասեց. Ով կին, մեծ է քո հավատքը. քեզ լինի ինչպէս ուզում ես. եւ նորա աղջիկը բժշկվեց նույն ժամից:

Մատ. 17.18-19 - 18 Այն ժամանակ աշակերտներն առանձին Հիսուսի մօտ եկան եւ ասեցին. Մենք ինչո՞ւ չկարողացանք հանել նորան: 19 Հիսուսն էլ ասեց նորանց, Ձեր թերահավատութեան համար. որովհետեւ ճշմարիտ ասում եմ ձեզ՝ եթէ մանանեխի հատի չափ հավատք ունենաք, այս սարին կասէք՝ փոխադրուիր այստեղից այնտեղ, եւ նա կփոխադրուի. եւ ոչինչ անկարելի չի լինիլ ձեզ համար:

Գործ. 14.8-9 - 8 Սա լսեց Պողոսի խօսքերը. Նա էլ նորա վրա նայեց, եւ երբոր տեսավ որ հավատք ունի փրկվելու, 9 Մեծ ձայնով ասեց. Ոտներիդ վրա ուղիղ կանգնիր. Եւ նա ցատկելով՝ ման էր գալիս:

III. ՀԱՎԱՏՔԸ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻԱԿ ՊԱՅՄԱՆԸ ՉԷ:

FAITH IS NOT THE ONLY CONDITION NECESSARY FOR HEALING.

- ***Հավատքը կարող է բուժման պայման լինել: Այնուամենայնիվ, ճիշտ չի լինի ասել, որ հավատքը միշտ եղել է միակ բուժման պայմանը: Աստվածաշունչն արձանագրում է բուժման օրինակներ, որտեղ հավատքը կարծես հիմնական գործոնը չի եղել:***

  Նոր Կտակարանի գրառումը շարունակվում է օրինակներով, որոնք ցույց են տալիս, որ նույնիսկ Առաքյալները ժամանակ առ ժամանակ առողջական խնդիրներ են ունեցել, այդ թվում՝ Պողոսը (2 Կորնթ. 12.7): Աստծո այս ծառաները միշտ չէ, որ (անմիջապես) բժշկվում էին, չնայած այն ամենին, ինչ մենք կարող էինք ակնկալել:

  *Գործ. 19.11-12 - 11 Եւ Աստուած նշանաւոր զօրութիւններ էր անում **Պողոսի ձեռով:** 12 Մինչեւ որ նորա մարմնի վերայից թաշկինակներ եւ վարշամակներ տանում էին դնում հիւանդների վերայ եւ ցաւերը հեռանում էին նորանցից, եւ չար ոգիները դուրս էին գալիս:*

- ***Այժմ մեծ ուշադրություն դարձրեք Նոր Կտակարանի եկեղեցական կյանքում բժշկության գործընթացին:***

*Գաղ. 4.13-14 - 13 Գիտեք, որ երբ ձեզ առաջին անգամ քարոզեցի, **մարմնով տկար էի:** 14 Եվ իմ տկարությունը, որ իմ մարմնի մեջ էր, չանարգեցիք ու չարհամարհեցիք, այլ ինձ իբրև Աստծու հրեշտակի ընդունեցիք, ինչպես Քրիստոս Հիսուսին:*

*2 Տիմ. 4.20 - 20 Երաստոսը մնաց Կորնթոսումը. եւ Տրոփիմոսին **հիվանդ թողեցի** Մելիտոսումը:*

*Փիլիպ. 2.25-27 - 25 Միայն հարկաւոր համարեցի՝ որ Եպափրոդիտոս եղբօրը՝ գործիս եւ զինուորութեանս ընկերին, այն ձեր առաքեալին, եւ իմ պէտք լինող բաների պաշտօնեային ուղարկեմ ձեզ մօտ: 26 նա էլ ձեզ բոլորիդ տեսնելու խիստ փափագ ուներ և մտահոգված էր, որ լսել էիք, թե **ինքը հիվանդացել է**: 27 Եւ իրաւի որ հիաւանդացաւ մերձիմահ, բայց Աստուած ողորմեց նորան. ոչ միայն նորան, այլ ինձ էլ, որ տրտմութիւն տրտմութեան վերայ չունենամ:*

*1 Տիմ. 5.23 - 23 Այսուհետև միայն ջո՛ւր մի խմիր, այլ մի քիչ գինի՛ գործածիր ստամոքսիդ և հաճախակի **հիվանդանալուդ** պատճառով:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչպես աղոթել բժշկության համար
How To PRAY FOR HEALING

1. ***Դիմեք եկեղեցու երէցներին:***
   Call the elders of the church.

2. ***Միմյանց խոստովանե՛ք ձեր հանցանքները:***
   Confess your trespasses to one another.

3. ***Միմյանց համար աղոթե՛ք, որ բժշկվեք:***
   Pray for one another, that you may be healed.